

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2014 թվականի հունվարի 18-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. Ուսումնական գործընթացը Հեռակա ուսուցման ֆակուլտետում:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2015 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասերի ընթացքի մասին /զեկուցող՝ Ն. Ա. Կուսուզյան/:

Նշվեց, որ 2015 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասերը սկսվել են 2015 թ-ի հունվարի 8-ից: Դասերը կազմակերպվել են 3 մասնաշենքերում՝ Գլխավոր /Իրավագիտություն, Պատմություն, Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/, Հաշվապահական հաշվառում, Ռուսաց լեզու բաժիններ/, Բնագիտական ֆակուլտետի /Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա, Կենսաբանություն, Բնապահպանություն և բնօգտագործում, Սերվիս, Դեղագործական քիմիա, Աշխարհագրություն բաժիններ/, Հումանիտար մասանգիտությունների /Հայոց լեզու և գրականություն բաժին/:

Արտահայտվեցին – Ա. Ե. Համբարձումյանը, Վ. Դ. Խաչատրյանը

Նշվեց, որ դասերն ընթանում են դասացուցակին համապատասխան: Բոլոր խմբերին հանձնվել են E-learning.gsu.am կայքի գաղտնաբառերն ու մուտքաբառերը: Առաջին և երկրորդ կուրսերում բոլոր դասընթացների գծով հանձնարարվել է անհատական աշխատանք: Կազմվել է միջանկյալ քննությունների ժամանակացույցը, ինչը տեղադրվել է Գավառի պետական համալսարանի կայքում և հայտարարությունների ցուցափեղկում: Բարձր կուրսերի ուսանողների համար կազմվել է ստուգարքների և քննությունների ժամանակացույցը:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուսուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան